

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2010 թ.)

Գիտահետազոտական աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՊՏՀ-ում գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել 35 թեմաներով՝ որոնցից 31-ը՝ ամբիոնային և 4-ը՝ բյուջետային ֆինանսավորմամբ: Այդ աշխատանքները վերաբերում են տնտեսագիտության, բնական գիտությունների, պատմության, քաղաքագիտության, փիլիսոփայության, բանասիրության առավել արդիական, գիտագործնական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին: Ստացվել են գիտական որոշ արդյունքներ տարածքային կառավարման և համաչափ զարգացման հայեցակարգային բարելավման, կառավարչական հաշվառման մեթոդաբանության և կենսաթոշակային համակարգի կատարելագործման, տնտեսական բարեփոխումների սիներգետիկայի, մրցունակության գնահատման չափանիշների կատարելագործման, աշխատանքի շուկայի ու զբաղվածության ոլորտի, գենդերային զարգացման, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում աշխատանքի առաջարկի գնահատման, ծառայությունների ոլորտի պայմանագրային հարաբերությունների բարելավման, ռազմավարական կառավարման, երկրորդային ռեսուրսների օգտագործման էկոլոգոտնտեսական ապահովման, բոլոնյան գործընթացի ներքո՝ կրթության կառավարման բարելավման, բանկային համակարգում աշխատանքի վարձատրության կազմակերպման, հայ կառավարչական մտքի հետազոտման և չորացրած մրգերի ու բանջարեղենի վարակազերծման ոլորտներում:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի կողմից հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվել են 2 դասագիրք, 28 ուսումնական ձեռնարկ, 11 մենագրություն, 16 դասախոսության տեքստ, 303 գիտական հոդված, 114 ուսումնամեթոդական աշխատանք (2009 թ. հրատարակվել է 34 ուսումնական ձեռնարկ, 15 մենագրություն, 2 դասագիրք, 18 դասախոսության տեքստ, 328 գիտական հոդված, 56 ուսումնամեթոդական աշխատանք (տե՛ս աղյուսակ 1)): Արտերկրի գիտական հանդես-

ներում հրատարակված հոդվածների թիվը կազմել է 41 (նախորդ տարվա 25-ի փոխարեն):

Բյուջետային ֆինանսավորվող թեմաներ

2010 թվականին շարունակվել է 2008-2010թթ. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման չորս թեմաների կատարումը:

1. «*Հայ կառավարչական միտքը 18-ից 20-րդ դարերում և պարադիգմայի փոփոխությունները 21-րդ դարակգրին*», կատարվում է կառավարման ամբիոնի կողմից (գիտ. ղեկավար՝ պրոֆեսոր Յու.Մ.Սուվարյան):

2. «*Աշխատանքի վարձատրության կազմակերպման բարելավումը ՀՀ բանկային համակարգում*», կատարվում է աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի կողմից (գիտ. ղեկավար՝ պրոֆեսոր Մ.Պետրոսյան):

3. «*Երկրորդային ռեսուրսաօգտագործման էկոլոգոտնտեսական ապահովումը ՀՀ-ում*», կատարվում է բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի կողմից (գիտ. ղեկավար՝ պրոֆեսոր Ս.Գևորգյան):

4. «*Պետական սեփականության արդյունավետ կառուցվածքի ձևավորման խնդիրները և դրանց լուծման ուղիները*», կատարվում է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի կողմից (գիտ. ղեկավար՝ պրոֆեսոր Ս.Դավոյան):

2011 թվականի համար ՀՀ գիտության պետական կոմիտե հայտ է ներկայացվել «*ՀՆԱ ծավալի և աճի տեմպերի վրա գիտության և կրթության ազդեցության գնահատումը*» գիտական կազմակերպության, առանձնացված գիտական կամ գիտակրթական ստորաբաժանման (ընդհանուր օգտագործման կենտրոնի, լաբորատորիայի) գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի հայտ (7100,0 հազար դրամ ընդհանուր ծավալով և 10 հաստիքային աշխատողներով):

2011-2012 թվականներին ՀՀ-ում տնտեսական աճի որակի գնահատման, ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծության և կանխատեսման, մարզերի բիզնես-միջավայրի և շուկայի մրցակցության մակարդակի հետազոտման, գնահատման և կանխատեսման, տարածքային կառավարման և համաչափ զարգացման հայեցակարգային բարելավման, արժեթղթերի շուկայի և տնտեսական աճի փոխազդեցության հիմնախնդիրների, կազմակերպությունների

Ֆինանսական կառավարման կատարելագործման, ՀՀ ընկերությունների միջազգայնացման մարքեթինգային հիմնախնդիրների, բնապահպանական և բնօրգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրների, փոքր և միջին բիզնեսի զարգացման հիմնախնդիրների և հայ կառավարչական մտքի հետազոտական աշխատանքների իրականացման համար ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների 13 (տասներեք) հայտեր են ներկայացվել ՀՀ գիտության պետական կոմիտե:

Գիտաժողովներ

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում կազմակերպվել են հետևյալ գիտաժողովները.

2010թ. մարտի 25-26-ը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Ռոստովի պետական տնտեսագիտական ու ՌԴ հարավային դաշնային համալսարանների հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել է միջազգային գիտաժողով՝ *«Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության տնտեսությունները համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում. հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները»* խորագրով: Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվել են 2 բաժանմունքներով, որտեղ ներկայացվել են 97 գիտական զեկուցում:

2010թ. մայիսի 17-18-ը կազմակերպվել է Մ.Ադոնցի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով՝ *«Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները»* խորագրով, որին ներկայացվել է 62 գիտական զեկուցում:

2010թ. հոկտեմբերի 21-22-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետությունում տնտեսագիտական կրթության սկզբնավորման 90 և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հիմնադրման 80-ամյակներին նվիրված *«Կրթության, գիտության և արտադրության ինտեգրումը որպես տնտեսական աճի ապահովման ռազմավարական ուղղություն»* խորագրով միջազգային գիտաժողով, որին ներկայացվել են 76 գիտական զեկուցում:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձանակագմի կողմից ներկայացվել են մի շարք միջազգային զեկույցներ: Ավելացել է նաև միջազգային

հրատարակումների քանակը՝ կազմելով հրատարակված գիտական աշխատանքների 13,5%-ը, նախորդ տարվա 7,6%-ի փոխարեն:

Համալսարանի դասախոսները **2010թ. ապրիլի 26-28-ը** մասնակցել են Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Հետբուհական և շարունակական կրթության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի կողմից Աղավնաձորում կազմակերպված «*Հետբուհական և շարունակական կրթության հիմնահիմունքները*» խորագրով միջազգային գիտական կոնֆերանսին:

Օտար լեզուների ամբիոնի դասախոս Լ. Տեր-Սարգսյանը հունիսի 17-19-ին մասնակցել է Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում կայացած «*Գիտելիքների ստուգման թեստային համակարգի ստանդարտացում և համապատասխանեցում եվրոպական չափանիշներին*» խորագրով գիտաժողովին:

Օտար լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Ս. Չալաբյանը օգոստոսին մասնակցել է Իտալիայի Թուրին քաղաքում կայացած «*Անգլերենի դասավանդումը որպես երկրորդ օտար լեզու*» թեմայով գիտամեթոդական գիտաժողովին:

Օտար լեզուների ամբիոնի դասախոս Բ. Թորգոմյանը 2010թ. հոկտեմբեր ամսին մասնակցել է Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում կայացած «*Օտար լեզուների դասավանդումը*» խորագրով գիտաժողովին և օտար լեզուներով հրատարակված գրքերի տոնավաճառին:

Օտար լեզուների ամբիոնի ֆրանսերեն լեզվի դասախոս Ս. Հովհաննիսյանը մասնակցել է Ալիանս Ֆրանսեզի կողմից Երևանում կազմակերպած վերապատրաստման մեկշաբաթյա դասընթացներին:

Տեխնոլոգիայի և բնական գիտությունների ամբիոնի վարիչ ֆիզմաթ գ.թ., դոցենտ Ռ. Ափրեյանը 2010 թ. հոկտեմբերի 12-15-ը մասնակցել է Աշտարակում կայացած «*Crystal Growth of α -lithium iodate by Unidirectional Method*» խորագրով միջազգային գիտաժողովին:

Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ա. Գևորգյանը 2010 թ. մարտին մասնակցել է Կովկասյան տարածաշրջանի ռեգիոնալ էկոլոգիական կենտրոնի (ՌԷԿ) կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովին:

Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դասախոս Ռ. Առաքելյանը 2010 թ. մայիսի 11-ին մասնակցել է «Խազեր» ՀԿ նախաձեռնությամբ Երևանում անցկացված «Կոպենհագենից դեպի Կանկուն» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին:

Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դասախոս Մ. Ղազարյանը 2010 թ. սեպտեմբերի 10-15-ը մասնակցել է Թուրքիայի Իզմիր քաղաքում NATO-ի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովին:

Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դասախոս Մ. Մկրտումյանը 2010 թ. օգոստոսի 14-22-ը Վրաստանի Քոբուլեթի քաղաքում մասնակցել է «Շրջակա միջավայրի պաշտպանության, ճարտարապետության և շինարարության ժամանակակից մեթոդները» խորագրով միջազգային գիտաժողովին, իսկ նույն թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 3-ը՝ Ջերմուկում կայացած «Ճարտարապետություն և շինարարություն. արդիական հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտատեխնիկական երկրորդ գիտաժողովին:

Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դասախոս Է. Վարդգեսյանը 2010 թ. ապրիլին մասնակցել է «Թրանսփարենսի ինթերնեյշնլ»-ի և German Marshall Fund Black Sea Trust-ի համատեղ ջանքերով Երևանում կազմակերպված “Increasing the Integrity of Mineral Resource Management Project” միջազգային գիտաժողովին:

2010 թ. նոյմբերի 30-ին Կրթական բարեփոխումների և արտաքին կապերի ու գիտության և որակի կառավարման վարչությունների մասնագետները մասնակցել են Երևանի պետական համալսարանում կազմակերպված Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումներին նվիրված «Տեմպուսի տեղեկատվական օր» խորագրով համաժողովին:

Ծրագրերի և օրենսդրական նախաձեռնությունների նախագծերի քննարկում

Համախառն ներքին արդյունքի ծավալի և աճի տեմպի վրա գիտության ու կրթության ներգործության գնահատման նպատակով կատարվել են ուսումնասիրություններ վերլուծություններ ու պատրաստված առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարություն:

Ուսումնասիրվել են «Հայաստանի Հանրապետության թեթև արդյունաբերության հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների» և «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունների» նախագծերը և ներկայացվել եզրակացություններ:

Գիտական կապեր և համագործակցություն

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է Ռոստովի պետական տնտեսագիտական և Հարավ դաշնային համալսարանների (Ռուսաստանի Դաշնություն), ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հետ գիտատեխնիկական համագործակցությունը:

Ուսանողական գիտական միջոցառումներ

ՀՊՏՀ ուսանողների մասնակցությունը համալսարանի գիտական կյանքին դրսևորվել է հետևյալ միջոցառումներով.

2010թ. ապրիլ ամսին մագիստրոսների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման նպատակով մագիստրոսական կրթական ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է գիտաժողով և լավագույն աշխատանքները հրատարակվել են:

2010թ. ապրիլ-մայիս ամիսներին ֆակուլտետներում և մասնաճյուղերում անցկացվել է ՀՊՏՀ ՌԻԳԸ 32-րդ նստաշրջանի առաջին փուլը:

ՀՊՏՀ հոբեյանական միջոցառումների շրջանակներում 2010թ. հոկտեմբերի 26-27-ին անցկացվել ՌԻԳԸ 32-րդ նստաշրջանի ամփոփիչ փուլը:

2010թ. ապրիլի 27-29-ը Համալսարանի 2 ուսանողներ մասնակցել են Երևանի պետական համալսարանում կազմակերպված «Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված» հանրապետական ուսանողական գիտաժողովին:

Որակի կառավարմանն ուղղված միջոցառումներ

Մասնագիտական կրթության որակի ապահովման արտաքին համակարգերի ստեղծման նպատակով ԲՈՒՀ-ի ընդհանուր և ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների, մասնագիտությունների և մասնագիտացումների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը հավաքագրվել և մուտքագրվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի» կայքէջում նախատեսված բաժնում:

Կազմվել է Համալսարանի գիտական կազմակերպության անձնագիրն ու ներկայացվել ՀՀ գիտության պետական կոմիտե:

II. Գիտամանկավարժական կադրերի պատրաստման գծով՝

2010 թվականի 10 ամիսներին կազմակերպվել միայն առկա ուսուցման ասպիրանտների ընդունելություն (9 մարդ): Հեռակա ուսուցման ասպիրանտների և հայցորդների ձևակերպման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ուսումնական տարվա ընթացքում ասպիրանտների և հայցորդների 29,8%-ը ավարտել են թեկնածուական ատենախոսության պաշտպանությամբ: Ընդ որում, այս ցուցանիշը շատ բարձր է առկա ասպիրանտուրայում՝ 81,3%, չափազանց ցածր է հեռակա ուսուցման ասպիրանտների շրջանում՝ 9,8% (2009թ. 8,6%-ի փոխարեն), իսկ հայցորդներինը կազմել է 50% (2009թ. 56,3%-ի փոխարեն): Միաժամանակ, կան ամբիոններ, որոնց շրջանավարտ հեռակա ասպիրանտներից ոչ մեկը սահմանված ժամկետում չի պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը: Չնայած որոշակի դրական միտումների, ասպիրանտուրայի արդյունավետության բարձրացման հիմնական խոչընդոտը շարունակում է մնալ հեռակա ուսուցման ասպիրանտուրան, որը հիմնականում պայմանավորված է հեռակա ասպիրանտուրա ընդունվողների աշխանաքային փորձի պակասով: Այսպես, հեռակա ուսուցման 15 շրջանավարտ ասպիրանտներից միայն մեկն է սահմանված ժամկետում պաշտպանել թեկնածուական ատենախոսությունները:

Ասպիրանտների հետ կատարվող աշխատանքներն իրենց տրամաբանական ավարտին հասնում են ԲՈՒՀ-ի համալսարանում գործող 014 մասնագիտական



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՍՆԱՆԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

խորհրդում: 2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին այստեղ կազմակերպվել է 37 ատենախոսության հրապարակային պաշտպանություն, որոնցից 13-ը, այսինքն՝ 35,1%-ը՝ «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» (Ը.00.02), 21,6-ական տոկոսը՝ «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» (Ը.00.03) և «Հաշվապահական հաշվառում և վիճակագրություն» (Ը.00.05) մասնագիտություններով:

Մասնագիտական խորհրդում ատենախոսություն պաշտպանած հայցորդների բաշխվածությունն ըստ ամբիոնների ունի հետևյալ պատկերը. «Մաթեմատիկայի և մոդելավորման»՝ 13,5%, «Ֆինանսներ և վարկ» և «Մաքսային և ապահովագրական գործ»՝ 10,8-ական տոկոս, «Միջազգային տնտեսական հարաբերություններ»՝ 8,1%, «Մակրոէկոնոմիկա» «Վիճակագրություն» և «Մարքեթինգ»՝ 5,4-ական տոկոս:



ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ